

Արտակ Ղազարյան

ՀԱՅ –ՎՐԱՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 1918 Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՀՀ ՂԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Բանալի բառեր- դիվանագիտական ներկայացուցչություն, վարչատարածքային-սահմանաբաժանում, միսիայի խորհրդական, հայ-վրացական կոնֆերանս, չեզոք գոտի, հայկական պատվիրակություն, դեկտեմբերյան պատերազմ, Լևոն Եվանգուլյան, պարսկական հյուպատոս:

1918 թ. մայիսին, երբ Հայաստանը և Վրաստանը դարձան անկախ հանրապետություններ, նրանց միջև կային բազմաթիվ չլուծված հարցեր: Այդ խնդիրներից թերևս ամենակարևորը վարչատարածքային-սահմանաբաժանման հարցն էր: Սահմանատարածքային վեճերն էլ ժամանակի ընթացքում հասունանալով՝ դեկտեմբեր ամսին վերածվեցին ռազմաքաղաքական առձակատման՝ 1918 թ. վրաց-հայկական պատերազմին: Հայ-վրացական կարճատև պատերազմին հաջորդեցին բանակցությունները: Վրաստանը ցանկանում էր իրականացնել իր տարածքային հավակնությունները և իրեն միացնել մեծապես հայերով բնակեցված Ախալքալաքի գավառն ու Հայաստանի անվիճելի տարածք Լոռին: Հայաստանի դեպքում դրությունը այլ էր, երկիրը պայքարում էր երկու հայկական հողակտորների և որ ամենակարևորն է՝ արտաքին աշխարհի հետ կապող կենսական նշանակության հաղորդակցության ուղիների անխափան գործունեության ապահովման ռազմավարական նշանակության խնդրի համար:

Չանդրադառնալով պատերազմական գործողություններին՝ նշենք, որ այն ավարտվեց 1918 թ. դեկտեմբերի 31-ին Թիֆլիսում գտնվող անգլիական և ֆրանսիական ռազմաքաղաքական ներկայացուցիչների միջնորդությամբ, որը յուրահատուկ քաղաքական պարտադրանք էր կողմերին: Հայաստանի Հանրապետության կառավարության բողոքը վրացիների կողմից Ախալքալաքը գրավելու դեմ թողնվեց անհետևանք: Անգլիայի, Ֆրանսիայի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովի որոշմամբ ռազմական գործողությունները դադարեցվեցին դեկտեմբերի 31-ին: Հայ-վրացական սահմանների հարցի լուծումը թողնվեց դաշնակից տերությունների լիազորությանը: Զինադադարից հետո հայ-վրացական հաշտարար

բանակցությունները տևեցին 3 ամիս: 1919 թ. հունվարի 9-ից 17-ը տեղի ունեցավ հայ-վրացական խորհրդաժողով, որին մասնակցում էին նաև Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Որոշվեց Բորչալուի գավառի տարածքը հայտարարել «չեզոք գոտի»՝ այնտեղ գտնվող հայ և վրաց զինվորների խիստ սահմանափակ թվաքանակով: Կողմերը ճանաչեցին միմյանց անկախությունը և վերականգնեցին դիվանագիտական հարաբերությունները¹:

Դիվանագիտական, առևտրային, փոստ-հեռագրական հարաբերությունները վերականգնելուն նպատակաուղղված ՀՀ կառավարության և Թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցչության ջանքերն հայկական կողմի համար առանցքային դարձան 1919թ. հունվարի 9-ից 17-ը տեղի ունեցած հայ-վրացական կոնֆերանսում: Մեր պատմագիտությունը անդրադարձել է հիշյալ շրջանին, սակայն մենք խնդրին փորձել ենք անդրադառնալ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության տեսանկյունից: Ճիշտ է, երբ դեկտեմբեր ամսին սկսվեցին հայ-վրացական բախումները, Վրաստանի ներկայացուցչությունը փակվեց, սակայն Թիֆլիսում միսիայի գործունեությունը ոչ պաշտոնական, բայց շարունակվում էր, առկա ընթացիկ աշխատանքները ծանրացան միսիայի խորհրդական Մ. Թումանյանի վրա: Վրացական կառավարության կոշտ դիրքորոշման հետևանքով Ա. Ջամալյանը անցանկալի համարվեց Վրաստանում դիվանագիտական աշխատանք վարելու տեսանկյունից: Ուստի Թիֆլիսում կատարվող դեպքերի, մասնավորապես հայության դրության, միսիայի շինության ու նրանում գտնվող ունեցվածքի մասին Հայաստանի կառավարությանը պարբերաբար տեղյակ էր պահում Մ. Թումանյանը:

Ինչպես արդեն նշեցինք, պատերազմի հետևանքով Հայաստանի ներկայացուցչությունը փակվեց: Վիրահայոց Ազգ. խորհուրդը փակվեց: Գաղթականական ու որբախնամ մարմինները, «Աշխատավոր», «Նոր-Հորիզոն», «Կավկ. Սլովո» և մի շարք ուրիշ թերթեր փակվեցին: Բազմաթիվ հայ գործիչներ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դաշնակցական անդամները ձերբակալվեցին: Հայ միլիցիոներները արձակվեցին պաշտոնից²:

1919 թ. հունվարի 1-ին կապիտան Դուգլաս-Ուիդերգի գլխավորությամբ Ղազնակիցների հանձնախումբը վերադարձավ Թիֆլիս՝ գեներալ Գաբրիել Ղորղանյանի և հայկական պատվիրակության հետ, որը եկել էր մշակելու հաշտության ծրագրի մանրամասները: Մարտիրոս Հարությունյանը և մյուս հայ ներկայացուցիչները

1 Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999 թ., էջ 53-54:

2 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993 թ., էջ 242:

հայտարարեցին, որ Ռայքրոֆթի, Շարդինյիի և Ժորդանիայի՝ դեկտեմբերի 25-ին Երևան հաղորդված ճեպագրում պարզորոշ նշվում է, որ վրացական բանակը պետք է մնա «ներկա գծում», այսինքն այն դիրքերում, որտեղ գտնվում էին այդ օրը: Քանի որ այդպիսի մեկնաբանությունը կարող էր զրկել Վրաստանին պատերազմի վերջին ձեռք բերած հաջողություններից և թողնել Շուլավերն ու Սադախլուն բրիտանական հսկողության ներքո, Արտաքին գործերի մինիստր Գեգեչկորին սպառնաց խզել բանակցությունները, եթե հայերը մնան անզիջում: Ճգնաժամն անցավ, սակայն, այն ժամանակ, երբ լուրեր հասան Թիֆլիս, որ բրիտանական հաշտարար առաքելությունը հունվարի 2-ին ժամանել էր Սադախլու և որ հաջորդ օրը հայկական բանակը սկսել էր հետ քաշվել:

Պառլամենտում Գեգեչկորին ազդարարեց, որ «երևանյան արկածախնդրությունը վերացված է»: Վրաստանի խորհրդարանն ընդունեց բանաձև, որը Վրաստանի տարածքային ամբողջականությունը քայքայելու հայկական դավադրությունը համարում էր անհաջողության մատնված և բավարարվածություն էր հայտնում, որ թշնամին հարկադրված էր հետ քաշվել: Ի նկատի ունենալով իրերի այս շրջադարձը՝ գրված էր բանաձևում, Վրաստանը բարեհաճորեն է տրամադրված՝ սկսելու հաշտության հարցի քննարկումը¹:

Վրացական, հայկական և դաշնակիցների պաշտոնատար անձինք 1919 թ. հունվարի 9-ից մինչև 17-ը հանդիպեցին՝ ժամանակավոր համաձայնությունը ավարտին հասցնելու համար: Խորհրդաժողովին նախագահում էր Կամերոնի Հայլանդրների 2-րդ գումարտակի հրամանատար փոխգնդապետ Ռոբերտ Նիլ Ստյուարտը և մասնակցում էին Վրաստանի կողմից՝ Գեգեչկորին, Ռամիշվիլին, Արտաքին գործերի մինիստրի օգնական Կոնստանտին Սաբախթարաշվիլին, գեներալ Ա.Կ.Գեդևանովը, իսկ Հայաստանի կողմից՝ գեներալ Գաբրիել Ղորղանյանը և Մարտիրոս Հարությունյանի հինգ հոգանոց խորհրդի պատվիրակությունը²:

Խորհրդաժողովի օրակարգի հարցերն էին՝ 1/ փոխադարձ անկախության ճանաչումն ու դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը, 2/ հաղորդակցության և երթևեկության պայմանների կարգավորումը, 3/ տրանզիտի հարցը, 4/ փոստ-հեռագրական համաձայնությունը, 5/ Հայկական կորպուսի գրավված գույքերի վերադարձը, 6/ հայկական կառավարությանը պատկանող և վրացիներից գրավված 13 միլիոն ռուբլի գումարը վերադարձնելու խնդիրը³:

1. Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հատոր I, Եր., 2005, էջ 128:

2. Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 129:

3. Տե՛ս Վրացյան Ա., նշվ. աշխ., էջ 249:

Խորհրդաժողովի ընթացքի մասին պատվիրակության նախագահ Մարտիրոս Հարությունյանը պարպերաբար տեղեկացնում էր Հայաստանի կառավարությանը: 1919թ. հունվարի 8-ի գրության մեջ Մ. Հարությունյանը կառավարության ղեկավար Քաջագնունուն տեղեկացնում էր հայկական պատվիրակության տեսակետը, ըստ որի երկու երկրների միջև տևական խաղաղության համար հարկավոր է լուծել մի շարք խնդիրներ, որոնք բխում են երկու երկրների աշխարհագրական վիճակից, այն հանգամանքից, որ Կովկասի նախկին վարչական կենտրոնը այժմ գտնվում էր միայն Վրաստանի ձեռքին: Դաշնակիցները խնդրել էին հայկական պատվիրակությանը կազմել այդ խնդիրների ցուցակը և ներկայացնել իրենց, որպեսզի հրավիրեն հայ-վրացական խորհրդաժողով իրենց մասնակցությամբ: Այնուհետև Մ.Հարությունյանը գրում էր, որ մի քանի օր է, վրացիք հետաձգում են կոնֆերանսի բացումը՝ առարկելով, որ իրենք դեռ պատրաստ չեն և որ կսկսեն միայն այն ժամանակ, երբ հայոց զորքերը քաշված կլինեն մինչև նշանակված սահմանագիծը: Խորհրդաժողովի բացումը սպասվում էր 1919 թ. հունվարի 9-ին:

Պատվիրակության անդամները անգլիական և ֆրանսիական միսիաններից թղթեր ունեին, որ եկել են նրանց հրավերով և գտնվում են միսիանների հովանավորության տակ¹: Այլ կերպ այստեղ անհնար էր ապրել. մի այնպիսի խառնաշփոթ էր տիրում, որ մարդիկ վախենում էին փողոց դուրս գալ: Ձերբակալությունները զանգվածային դարձան. բանտերը և մեծ շենքերը լեփ-լեցուն էին 19-45 տարեկան հայերով: Առանց խտրության ձերբակալում, ապա մեծ գումարներ առնելով՝ արձակում էին: Հայավաճառության մի որդիա էր ստեղծված, որը իր նմանը չունեի ոչ մի երկրում և չէր ունեցել պատմության որևէ շրջանում:

Ջանգվածային ձերբակալությունները կատարվել էին առանց կառավարության գիտության, ինչպես իրենք էին ասում, ոստիկանության բռնի ձեռներեցությամբ: Հայկական պատվիրակությունը անմիջապես բողոք էր ներկայացրել Անտանտի ներկայացուցիչներին, որոնք լինելով վրացական կառավարության մոտ՝ պատասխան էին ստացել, որ ամեն բան կատարվել է առանց իրենց գիտության, միլիցիայի ինքնագլխությամբ, որ հանցավորները կպատժվեն, բանտերը դեռ լիքն են, հիվանդությունները մեծ ծավալ են ստանում: Շուկավերը առանց դիմադրության գրավելով՝ վրաց զորքերը անասելի թալան և ավերածություն էին գործել. Բացի այդ, գյուղի վրա դրված էր մեկ միլիոն ռուբլի կոնտրիբուցիա և հազարավոր փութ ցորեն, գարի ու խոտ: Նույնպես տեղեկություն կար, որ մի քանի այլ գյուղեր հեծում են վրաց

1. Տե՛ս ՀԱԱ, ֆ. քաղ. գ.140, թ. 36:

զինվորների սանձարձակությունից: Այս մասին էլ բողոք ներկայացվեց, այդ թվում և Ախալքալաքում զինադադարի խախտման մասին:

Հայկական մամուլը բոլորովին խափանվել էր: Պատվիրակությունը գրկվել էր ճշմարտությունը պարզելու հնարավորությունից, վրացիք ամենաանպատկառ կերպով խեղաթյուրում էին փաստերը և մոլորեցնում հասարակական կարծիքը¹:

Խորհրդաժողովն ունեցավ յոթ նիստ՝ հունվարի 9,10,11,13,15,16-ին և ստորագրության ու լրացումների համար՝ հունվարի 22-ին²:

Խոսելով խորհրդաժողովի առաջին նիստի մասին, որը տեղի էր ունեցել հունվարի 9-ին, Մ. Հարությունյանը Հայաստանի կառավարությանը հղած գրության մեջ նշում էր, որ կոնֆերանսը հրավիրվել էր դաշնակիցների կողմից, որին ներկա էին երկու անգլիական սպա, որոնցից մեկը իբրև թարգման, ֆրանսիական կոնսուլ Ղյու-Ռուան և Ա. Պուադեբարը, հայկական պատվիրակությունը ամբողջ կազմով, իսկ վրացիներից Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին և ևս մեկ հոգի:

Օրակարգի կարևոր հարցերից մեկը հայկական պատվիրակության ստորագրած զինադադարի պայմանների մութ կետերի պարզաբանումն էր: Սակայն վրացիք հայտարարում են, որ իրենք լիազորված չեն այդ հարցերի քննությամբ զբաղվելու, բայց սկզբունքով կարևոր են համարում և այդ պատճառով հրավիրել են կոնֆերանս, որին հայերը չուզեցին մասնակցել: Վրացիները առաջարկում են կազմել քննիչ հանձնաժողով, որը պետք է պարզաբաներ, թե ով է մեղավոր այս կոնֆլիկտում: Հայկական պատվիրակությունը միանում է այդ առաջարկին: Ըստ այդ առաջարկի կազմվում է երկու հանձնաժողով. ա/ զինվորական՝ երկու կողմի կայազորների քանակը որոշելու համար, մյուսը՝ Բորչալուի խառը վարչության կազմը որոշելու:

Հայկական պատվիրակության առաջարկած հարցերից խորհրդաժողովի նախագահը ընդունում է միայն պատերազմական գերիների և արքորվածների ու ձերբակալվածների անմիջական արձակման հարցը

Այստեղ միայն Ռամիշվիլին է առարկում, ասելով, որ ձերբակալվածների մեջ կան այնպիսիները, որոնք Վրաստանի ներքին գործերի հանգամանքով են բանտարկված, օրինակ, դաշնակցականները, որոնք ապստամբություն են հարուցել Թիֆլիսում և Շուլավերում: Մյուս բոլոր հարցերը նա համարեց տնտեսական, որոնց մասին սկզբից ևեթ հայտարարվել էր, որ այդ խորհրդաժողովում չպիտի դրվեն:

1 . ՀԱԱ, ֆ. քաղ. գ. 140, թ. 37:
2. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 6, մաս I, թ. 228:

Վեճ է ծագում նաև այն հարցում, թե վրաց գործերի ո՞ր օրվա դասավորությունը պիտի ճանաչել՝ դեկտ. 25-ի, 28-ի, թե 31-ի: Սակայն այդ հարցը արդեն որոշվել էր ի հօգուտ 31-ի, առանց հայկական պատվիրակության մասնակցության, վրացական կողմի հրամայական պահանջով¹:

Խորհրդատուների հաջորդ նիստում քննարկվում է Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող երկաթուղու հարցը, իսկ ավելի որոշակի՝ չեզոք գոտու երկաթուղու հարցը: Այս վիճաբանությունների ընթացքում պարզվում է, որ վրացիները նախապես տեսակցել են Անտանտի ներկայացուցիչների հետ և նրանց ասել, որ Հայաստանը ո՛չ լուծմոտիվ ունի, ո՛չ վագոն և ո՛չ էլ կազմակերպված երկաթուղային հաստիք: Ուստի տեղեկացվում է, որ եթե երկու կողմերը շահագրգռված են, որ գիծը շուտով գործի, պետք է չեզոք գոտու երկաթուղային պաշտոնյաները լինին նրանք, ովքեր եղել են պատերազմական գործողություններից առաջ և պիտի ենթարկվեն Վրաստանին: Իրենց այս պահանջը ամրապնդել են նաև սպառնալիքով, որ, հակառակ դեպքում, Վրաստանի երկաթուղու բանվորությունը գործադուլ կանի: Հայկական պատվիրակությունը խիստ հակառակվում է այս առաջարկին, սակայն ապարդյուն: Կոնֆերանսի նախագահը պնդում է, որ Հայաստանի շահն էլ այդ է պահանջում, որ երկաթուղին շուտ սկսի գործել, իսկ թե բանվորները ովքեր կլինեն, երկրորդական հարց է: Նա կատեգորիկ հարց է դնում, որ պատվիրակությունը պետք է ընդունի վրացական կողմի պայմանը, կամ էլ հաշտվի երկաթուղային հաղորդակցություն չունենալու հետ:

Ինչքան էլ հայկական պատվիրակությունը հակառակվում է իր համոզիչ փաստարկներով, միևնույն է խորհրդատուների նախագահը հայտնում է, որ հրահանգ ունի այդ հարցի վերաբերյալ և այն լուծում է ըստ վրաց պահանջի²:

Հարցի լուսաբանման տեսանկյունից կարևոր է անդրադառնալ Հայաստան-Վրաստան դիվանագիտական հարաբերություններին և, մասնավորապես, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության վերաբացման կենսական խնդրին, քանզի շատ դեպքերում դրանից էր կախված դեպի Հայաստան հացի ու ալյուրի, զենքի ու զինամթերքի և կենսական նշանակության այլ ապրանքների առաքման կամակերպումը, արտաքին աշխարհի հետ կապի ապահովումը: Թե ինչ դրության մեջ էին գտնվում Վրաստանում հայկական դիվանագիտական միսիայի անդամներն ու նրա ունեցվածքը, Հայաստանի Հանրապետության համար շատ կարևոր էր: Հայկական միսիայի փակվելուց հետո դրանք գրեթե թողնվել էին բախտի քմահաճույքին, որովհետև ինչպես

1. ՀԱԱ, ֆ. քաղ., գ. 140, թ. 39-40:
2. ՀԱԱ, ֆ. քաղ., գ. 140, թ. 41:

արդեն նշել ենք, հունվարի սկզբներին Վրաստանում իսկական «հայորսություն» էր սկսվել, և այս պայմաններում դժվար թե հայկական դիվանագիտական միսիայի ունեցվածքն ու նրա Վրաստանում մնացած անդամները չտուժեին:

1919 թ. հունվարի 12-ին արտաքին գործերի մինիստրին հղած նամակում միսիայի խորհրդական Մ. Թումանյանը ներկայացնում էր նրա գործերը, որոնք խառնաշփոթ և անկայուն դրության մեջ էին: Ծառայողների մի մասը մեկնել էր Բաթում և դեռ պարզ չէր նրանց վերադարձի հարցը: Ինքը՝ Մ. Թումանյանը, մնացել էր Թիֆլիսում տկարության պատճառով և գտնվում էր հսկողության տակ ու տնից դուրս գալ չէր կարողանում: Միսիայի անձնակազմից շատերը մնացել էին Թիֆլիսում ու ենթարկվել անախորժությունների ուրիշ հայ քաղաքացիների հետ: Հայաստանի հպատակների և միսիայի շահերի պաշտպանությունը հանձնվել էր պարսկական հյուպատոս Շերիֆ-էդ-Դոուլեին, որը գործնականում ներկայացնում էր հայկական կողմի շահերը և իսկապես բավականին նպաստել էր թե՛ միսիայի գործերին և թե՛ առհասարակ հայ բնակչությանը՝ երբեք չզլանալով իր միջնորդական առաքելությամբ ու միջամտությամբ հանդես գալու վրաց կառավարության առջև¹:

Մեկ այլ գրությամբ, որը թվագրված է 1919 թ. հունվար 13-ով՝ ուղղված Վրաստանում արդեն նախկին դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանին, Մ. Թումանյանը հայտնում էր, որ Բաթում գնացած ծառայողները գանգատվում են ծանր պայմաններից: Նամակում հայտնվում էր, որ մոտ օրերին նրանց վերադառնալու հարցը վերջնականապես պարզվելու է ու նրանք կվերադառնան Թիֆլիս: Թիֆլիսում մնացածները դժգոհ էին, որ իրենց էլ չեն տարել, որովհետև վրացական իշխանությունները շարունակ անհանգստացնում էին նրանց: Այդ ընթացքում դիվանագիտական միսիայի շինությունը քիչ էր մնացել ընկներ վրացական ինչ-որ հաստատության ձեռքը: Վրացական իշխանության ներկայացուցիչները եկել էին և նույնիսկ դիվանագիտական միսիային պատկանող տան կառավարչին առանց մի բան ասելու փորձել էին տեղավորվել: Ժամանակին իմանալով այդ մասին՝ Մ. Թումանյանը գրում է, «աղմուկ» է բարձրացնում և նույն օրը պարսկական կնիքով բոլոր սենյակները կնքվում են: Սակայն մինչ այդ կնիք չկար, և ոչ էլ բանալիներն էին տրված պարսկական հյուպատոսին: Դոլուխանյանի սենյակները (Արամյանցի տանը), որ կնքված էին միայն միսիայի ու վրացական կնիքներով, վրացիները բացել էին ու այնտեղ եղած իրերն ու

1. ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 4:

թղթերը տարել: Արամյանցի շինության մեջ ոչինչ չէր մնացել. ամեն ինչ տարել էին, իսկ տունը զբաղեցրել էր անգլիական զորանոցը¹:

Անդրադառնալով անգլիացիներին՝ Մ. Թումանյանը ՀՀ արտաքին գործերի մինիստրին ուղղված 1919 թ. փետրվարի 9-ի նամակում գրում էր, որ անգլիացիները ցանկանում են ամրապնդել իրենց ազդեցությունը Կովկասում: Այնուհետև նշում էր, որ նրանք աշխատում են այդ ազդեցությանը տևական բնույթ տալ և հաստատվել Կովկասում երկար ժամանակով: Մ. Թումանյանը նկատում էր, որ վրաց կառավարության հակառուսական միտումներն համակրություն են գտնում անգլիացիների կողմից: Դրանով էր թերևս բացատրվում արտաքին գործերի մինիստրի օգնական Սաբախտարիշվիլու ուղևորությունը Բաքու, ուր նա գնացել էր դեկտեմբեր ամսին Վ. Թոմսոնից օգնություն խնդրելու հայերի դեմ, որը հաջողվել էր: Տուվյալներ կային կարծելու, որ որոշ համաձայնության էր կայացվել Թոմսոնի հետ: Անգլիական ներկայացուցչի վերաբերմունքը հայ-վրացական խորհրդաժողովի ժամանակ բավականաչափ հաստատում էր այդ տեղեկությունները:

Այդ ընթացքում շարունակվում էին նաև բանակցություններ բոլշևիկների հետ, որոնք Վրաստանին խոստացել էին կատարյալ ինքնավարություն²:

Այսպիսի բարդ և տարբեր շահերի բախման կիզակետ հանդիսացող մթնոլորտում Հայաստանի Հանրապետությունը, նրա կառավարությունը, դիվանագիտական բնագավառի ներկայացուցիչները զգալի ջանքեր էին գործադրում կենսական նշանակության կնճիռները հարթելու համար, քանզի հայ-վրացական խորհրդաժողովում Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու հարցը մեծ կարևորություն ուներ հայկական պատվիրակության համար: Անհրաժեշտ էր շուտափույթ վճռել Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչիչ ունենալու խնդիրը, նրան հանձնել չլուծված կամ թերի հարցերը և շուտ վերադառնալ Երևան: Սակայն, ինչպես նշում էր հայկական պատվիրակության նախագահ Մ. Հարությունյանը, ամենից շատ պատվիրակությունը դիմադրության էր հանդիպում հենց այդ կարևոր հարցի լուծման ժամանակ: Վրացիները ստեղծված վիճակը համարում էին զինադադար, այլ ոչ թե խաղաղություն: Դա նրանց հնարավորություն էր տալիս իրականացնել իրենց ներքին քաղաքական ծրագրերը: Պատվիրակության նախագահի տեսակցությունը Չեզեչկորու հետ պարզում է, որ Վրաստանը մտադիր չէ վերսկսել դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի հետ, այլ միայն համաձայն է

1. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 6:
2. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35-36:

ընդունել Հայաստանի կողմից գործակալներ, ովքեր այս կամ այն կոնկրետ խնդրի համար կարող էին նշանակվել: Գեգեչկորու ասելով՝ կարող էին լինել պարենավորման, ֆինանսների, երկաթուղու համար և այլ գործակալներ: Եվ երբ Գեգեչկորուն հարց են տալիս, թե ով է պաշտպանելու Հայաստանի քաղաքացիների շահերը Վրաստանում, նա պատասխանում է, որ կպաշտպանի նա, ով պաշտպանել է պատերազմի ընթացքում, այսինքն՝ պարսից հյուպատոսարանը: Սա անընդունելի էր հայկական կողմի համար, ուստի հունվարի 16-ի նիստում համաձայնության եկան, որ նշանակված գործակալների գլխին պետք է կանգնած լինի մեկ անձնավորություն: Հետևաբար հույս էր առաջանում, որ այսպիսի մարմնի իրավունքները ապագայում հետզհետե կընդարձակվեին¹:

Հայկական պատվիրակությունը առաջարկում էր հետևյալ խմբագրությունը. «Հարաբերությունների համար նշանակվում են ազենտներ՝ գլխավորությամբ մի անձի» («возглавляемое одним лицом»): Իսկ վրաց խմբագրությունը ուներ հետևյալ տեսքը. «գործակալներ՝ գործնական բնույթ ունեցող մասնագիտական խնդիրների համար» («по специальным вопросам делового характера»): Այստեղից երևում է, որ վրացիների առաջարկած բանաձևը անորոշ էր թողնում դիվանագիտական հարաբերությունների խնդիրը, ուստի երբ պետք է ստորագրվեին որոշումները և երբ Ստյուարտը հակվում էր դեպի վրաց բանաձևը, հայկական պատվիրակությունը գերադասում է այդ կետը բոլորովին հանել և դիվանագիտական հարաբերությունների խնդիրը բաց թողնել²:

Ինչպես տեսնում ենք, դիվանագիտական միսիայի բացման հարցում հայ և վրացի պատվիրակները լիարժեք համաձայնության չեկան: Այսպիսով, Հայաստանը Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ չունեի, հաճախակի էին դառնում դիմումները ուղղակի բրիտանական միսիային, որը խնդրատուներին ուղարկում էր հայկական պատվիրակության մոտ: Պարզ էր, որ այս վիճակը երկար տևել չէր կարող, որովհետև դա որոշակի անհանգստություն էր պատճառում նաև բրիտանական միսիային, որի պատասխանատու անձերը՝ գեներալ Ուոկերը և մայոր Կենբելը, արտահայտվում էին դիվանագիտական հարաբերությունները վերսկսելու օգտին:

Արդեն փետրվարի վերջերից երևի նույն պատճառներով վրաց կառավարությունը գնում է զիջումների և ի վերջո հայտարարում, որ համաձայն է վերաբացել հայկական դիվանագիտական միսիան լրիվ իրավունքներով: Սակայն փետրվարի 28-ի և մարտի 3-ի նիստերում, երբ վերջնականապես ձևակերպվում էր այս խնդիրը, վրաց ներկա-

1. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, մաս I, թ. 241-242:
2. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, մաս I, թ. 242:

յացուցիչները պայման են դնում, որ համաձայն միջազգային սվորության, դիվանագիտական նախկին ներկայացուցչությունը պետք է փոխվի ամբողջ կազմով, քանզի Ա. Ջամալյանի անձը համարվում էր քաղաքական առումով անցանկալի: Հայկական պատվիրակությունը չի համաձայնվում բոլոր խորհրդականներին փոխել և կողմերը պայմանավորվում են դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելու ընթացքում պահպանել միջազգային սվորությունը¹:

Վրաստանի արտգործմինիստր Գեգեչկորին խոսակցություններից մեկի ժամանակ ակնարկել էր, որ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը չպետք է լինի դաշնակցական ղեկավար կուսակցությունից: Առհասարակ նկատվում էր, որ Գեգեչկորին հաճույքով բանակցություններ կվարեր ոչ դաշնակցական անձնավորությունների հետ: Ղա էր պատճառը, որ Լևոն Եվանգուլյանի թեկնածությունը ընդունվեց առանց առարկության², առավել ևս, որ նա որոշակի համակրանք ու հարգանք էր վայելում Վրաստանում: Նրա նկատմամբ որոշակի դրական դիրքորոշում կար վրացական իշխանությունների կողմից որպես հայ-վրացական միջպետական հարաբերությանների կարգավորման համակիր:

1919 թ. մարտի 6-ի 451 համարի գրությունով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է Լևոն Եվանգուլյանի թեկնածությունը դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում: Կարևոր համարելով այս գրությունը՝ մեջբերենք այն ամբողջությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշեց Լևոն Գեորգևիչ Եվանգուլյանին որպես իր դիվանագիտական ներկայացուցիչ նշանակել Վրաստանի կառավարությունում / Թիֆլիսում/:

Լևոն Գեորգևիչ Եվանգուլյանը լիազորված է պաշտպանել Հայաստանի շահերը:

Նրան տրված է այս հավատարմագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է Վրաստանի Հանրապետության կառավարությանը լիովին վստահել նրա բոլոր հայտարարություններին, որոնք նա կանի Հայաստանի Հանրապետության կառավարության անունից»³:

Այսպես, մարտի 8-ին Վրաստանի կառավարությունը և մարտի 24-ին Հայաստանի կառավարությունը հեռագրեր փոխանակեցին, որով հավաստեցին, որ ճանաչում են

1. Տե՛ս ՀԱԱ, ֆ. քաղ, գ.140, թ.123

2. Նույն տեղում, էջ 124:

3. ՀԱԱ, ֆ. 275, գ. 5, գ.116, թ. 31:

միմյանց պետական անկախությունը: Վրաստանը հունիսին հայտնեց, որ Գ. Մախարաձեին նշանակում է Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչ¹:

Այստեղ հարկ ենք համարում մի փոքր կանգ առնել դիվանագիտական արարողակարգի վրա, որի լուսաբանումը, մեր կարծիքով, շատ կարևոր է երկու երկրների հարաբերությունները դիվանագիտական մակարդակում հասկանալու համար: Այստեղ խոսքը վերաբերում է Լ. Եվանգուլյանի նամակին՝ ուղղված Հայաստանի արտաքին գործերի նախարարին, որի մեջ նա գրում էր Վրաստանի արտաքին գործերի մինիստրի հետ հանդիպման ընթացքի ու արդյունքների մասին: Նրանց հանդիպումը կայացել էր 1919 թ. մարտի 15-ին, այսինքն Լ. Եվանգուլյանի՝ Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչի պարտականությունները ստանձնելուց անմիջապես հետո:

Արարողակարգի համաձայն Հավատարմագրերը Լ.Եվանգուլյանը պետք է հանձներ պետության ղեկավարին, սակայն Ն. Ժորդանիայի հիվանդության պատճառով Եվանգուլյանին տեղեկացնում են, որ նրան ընդունելու է արտաքին գործերի նախարար Եվգենի Պետրովիչ Գեգեչկորին: Մեր դիվանագիտական ներկայացուցչի և Վրաստանի արտգործնախարարի հանդիպմանը ներկա է եղել նաև ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին, որը նաև մասնակցել է փոխադարձ խնդիրների քննարկմանը:

Զրույցի ընթացքում Ռամիշվիլին նշում է, որ պատերազմ ոչ մի կողմն էլ չէր ուզում, սակայն այն տեղի ունեցավ, և ասում էր, որ իրենք (վրացիները) անում են ամեն ինչ փոխհարաբերությունները հարթելու համար: «Մեր ազդեցության տակ այնպիսի ազգայնական թերթերը, ինչպիսիք են «Սաքարթվելոն» և «Գրուզիան», փոխել են իրենց վերաբերմունքի եղանակը և գրում են մեր շահերի նույնության մասին:

Գեգեչկորի. Այս իմաստով դուք էլ ազդեցեք ձեր մամուլին: Չկա մի հարց, որ անկարելի լինի բանակցությունների միջոցով լուծել երկու կողմի համար բարեհաջող իմաստով:

Եվանգուլյով. Նմանապես պարզել և մեր ու ձեր վերաբերմունքը դեպի Ադրբեջանը:

Գեգեչկորի. Հարկավ, Կովկասյան բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների կոնֆերանցիան կթեթևացնի շատ խնդիրների լուծումը:

Եվանգուլյով. Մեր կառավարությունը միշտ էլ պատրաստ է բոլոր խնդիրները լուծել բանակցությունների և համաձայնության ճանապարհով, կարծում են, որ կոնֆերանցիան, որի մասին բարեհաճում եք ասել, համակրությամբ կընդունվի մեր

1.Տե՛ս Սարդարյան Կ. ,նշվ.աշխ., էջ 106:

պետության կողմից, բայց ցանկալի է, իհարկե նախնական համաձայնություն մեր և ձեր միջև կոնֆերանսի ծրագրի մասին:

Սրանով վերջացավ մեր զրույցը»¹:

Այս զրույցից հետո Եվանգուլյանը հայտնում է նաև իր անձնական համոզմունքը, որ վրաց կառավարությունը իրապես ցանկանում էր խաղաղ համակեցություն և պատրաստ էր գիշողությունների այն պայմանով, որ իրոք ճանաչվեր Վրաստանի անկախությունը: Եվանգուլյանի հետ զրույցի ժամանակ արտաքին գործոց մինիստր Գեգեչկորին անդրադարձել էր նաև դիվանագիտական միսիայի կազմի խնդրին: Ոչինչ չունենալով միսիայի խորհրդական Մ. Գ. Թումանյանի անձնավորության դեմ՝ նա գտնում էր, որ տեղի ունեցած միջադեպից հետո պետք է նորոգվեր միսիայի ամբողջ կազմը, ուստի և իշխան Թումանյանին պետք էր փոխարինել ուրիշով:

Նկատի առնելով, որ Թումանյանը ամեն միջոց ձեռք էր առնում միջադեպը հարթելու, որ նրա գործողությունները մատնանշում էին նրա բարեկամական վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ, Ե. Պ. Գեգեչկորին գտնում էր, որ Թումանյանը որոշ ժամանակով կարող էր հեռանալ գործից և մի երկու ամսից հետո նորից ստանձնել խորհրդականի պարտականությունները:

Ահա այսպիսի ընթացք ու ավարտ ունեցավ հայ-վրացական պատերազմի արդյունքները ամփոփող խորհրդաժողովը 1919 թ. սկզբին, որին որոշակի մասնակցություն ունեցան Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցները: Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հարցերը, կարելի է ասել, որոշակի լուծում ստացան և երկիրը դուրս եկավ այն շրջափակումից, որի մեջ հայտնվել էր մինչև 1918 թ. դեկտեմբերյան պատերազմը: Ընդհատված հայ-վրացական միջպետական հարաբերությունները վերականգնվեցին և Թիֆլիսում վերաբացվեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը:

Ամփոփելով վերն ասվածը՝ նշենք, որ 1918 թ. դեկտեմբերի պատերազմը ավարտվեց դաշնակից պետությունների ներկայացուցիչների միջնորդությամբ: Հունվար ամսին սկսվեցին բանակցությունները Հայաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ և շարունակվեցին հայ-վրացական հունվարյան կոնֆերանսում: Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ և կոնֆերանսի նախագահ Ստյուարտը հաշվի առնելով բրիտանական կառավարության աշխարհաքաղաքական շահերը և ընդառաջ գնալով վրաց պատվիրակության

1. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.181 մասI, թ.122:

պնդումներին՝ հարցերի լուծման սլաքը թեքում էր դեպի վրաց պատվիրակության առաջարկները: Դրա վառ ապացույցը, մեր կարծիքով, կոնֆերանսի արդյունքում ձեռք բերված այն համաձայնությունն էր, ըստ որի Ախալքալաքի գավառը թողնվեց վրացական իշխանության ներքո, իսկ Բորչալուի գավառը հայտարարվեց չեզոք գոտի: Բրիտանական առաքելության ոչ հայանպաստ տեսակետի մասին է վկայում նաև Վ. Վիրաբյանի դիպուկ տեսակետը այն մասին, որ «ոչ առանց բրիտանական աջակցության որոշվեց չեզոք գոտում երկաթուղագիծը հանձնել Վրաստանին»¹:

Խորհրդաժողովի ընթացքում համաձայնության չէին գալիս հայ և վրացի պատվիրակները թերևս ամենակարոր հարցերից մեկի՝ հենց դիվանագիտական միսիայի բացման հարցում: Հայաստանը Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ չուներ: Մարդիկ բազմաթիվ խնդիրներով դիմում էին հայ պատվիրակությանը, որը հարկադրված էր դրանց լուծման համար դիմել Վրաստանի կառավարությանը կամ բրիտանական միսիային: Փետրվարի վերջերից վրաց կառավարությունը հայտարարում է, որ համաձայն է վերաբացել հայկական դիվանագիտական միսիան: 1919թ. մարտի 6-ին Լևոն Եվանգուլյանի նշանակումով Հայաստանի կառավարությունը ճանաչում էր Վրաստանի անկախությունը և վերականգնվում էին երկկողմ դիվանագիտական հարաբերությունները:

Артак Казарян , Урегулирование армяно-грузинских политических отношений после войны в декабре 1918г. и возобновление армянской дипломатической миссии.

Результаты армяно-грузинской войны (декабрь 1918г.) были обобщены конференцией, которая состоялась 9-17 января 1919 г. в Тифлисе. На армяно-грузинской конференции были обсуждены и решены многие политические и экономические вопросы.

Наконец, 6 марта 1919 г, после многих встреч и дискуссий, в Тифлисе была возобновлена работа дипломатического представительства Республики Армения, которое имело большое значение для отрезанного от внешнего мира Республики Армения.

¹ Տե՛ս Վիրաբյան Վանիկ, 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Երևան, 2003 թ., էջ 206:

Artak Ghazaryan, Regulation of Armenian-Georgian political relations after the war of December 1918 and reestablishment of the diplomatic representation of the Republic of Armenia - The results of the Armenian-Georgian war of December 1918 were summarized during the conference held in Tbilisi from January 9 to 17, 1919. A lot of political and economic problems were discussed and solved at the Armenian-Georgian conference. Finally, after a number of meetings and discussions, the Armenian Diplomatic Representation was reopened in Tbilisi on March 6, 1919. That was of high importance for the Republic of Armenia which was isolated from the external world during that period.

Արտակ Ղազարյան- ԵՊՀ-ի հայոց պատմության ամբիոնի հայցորդ: